

Եպիսկոպոս Տրայանուպոլսոյ ի կողմանս անհաւատից (in partibus infidelium), թղթեր առած Լեոբոլտ Ա. Կայսրմէ, եւ Լեհաց Օգոստոս Բ. թագաւորէն եւ Առաքելական Աթոռէն, որ ամենայն կերպով կը ջանար Մոլտաւիոյ Հայերն ի միութիւն բերել, ուղեւորեցաւ Մոլտաւիա առ իշխանն, — հաւանականաբար այն ժամանակ կ'իշխէր Անդիոյ Քանդէմիր իշխանն (1696—1701), որ այնչափ հաւանական կ'երեւայ, որչափ Օգոստոս Բ հազիւ 1697ին Յունիս 27ին¹⁴³, Սուլիեպիի 1696ին Յունիս 17ին վախճանելէն ետեւ, Լեհաց թագաւոր եղաւ —: Ներսէսեանի զիտաւորութիւնն էր իշխանէն հրաման առնուլ՝ որ Մոլտաւիոյ արեւելեան հայ եկեղեցիները Լեմպերկի կաթողիկէայ հայ Արքեպիսկոպոսին իրաւաբանութեան ենթարկուին. բայց այս չյաջողեցաւ իրեն:

Յամին 1704, Մոլտաւիոյ Միքայէլ Ռաքովիցա իշխանին ժամանակ (1703—1705) Սուչաւայի հայ հասարակութիւնն աճեցաւ, երբ Թրանսիլվանիոյ Եղիսաբեթոպոլիս (Պաշպալով) քաղաքէն Հայեր Սուչաւա գաղթեցին, վասն զի Թրանսիլվանիոյ իշխանն Փրանկիսկոս Բ Ռաքոսի Հայոց ստացուածքներն յաիշտակել եւ տներնին այրել հրամայեց, Հայոց իրենց կայսեր հաւատարիմ մնալուն համար¹⁴⁴:

1707ին Մարտ 10ին Լեմպերկցի հարուստ հայն՝ Դոմինիկ¹⁴⁵ Պոկտանովիչ 300 լեհական Փլորին կտակեց Սուչաւայի Ս. Աստուածածնի հայ եկեղեցւոյն (Հաճկատար) նորոգութեան